Դ կողմն գնաց վազելով՝ որ խիստ հով էր։ Մի ծարն կրակին եհաս ի Մահմուտ փաշի Բիւրքճինոցն, և մի ծարն անց գնաց ընդ Տիւանի ճանապարհովն և ընդ Ալի ճամիովն մինչև ի Ղատըրղա իլիմանն, և մի ծարն գնաց Կէտիկ փաշայովն մինչև ի Օխճիլարի ծարն և մի ծարն անցեալ զչարսուն ամենայն և գնաց ի յԷսկի սարայի պատն դէմ առաւ. և այնքան այրելոցն հին և նոր Պէզէստանքն ի ցից մնացեալ որ ոչ այրեցաւ. և բաղում ինաս եղև քաղաքիս և առ հասարակ բնակչաց տեղոյս, որ ոչ պատմի և ոչ ի գիր արկանի։ Եչի (11 Նոյ.) առաւօտուս մարեցաւ։

ԺԴ–իս օր Կիրակի. ի Սուրբ Գէորք գնացաք ի մօտ Հոգևորտէրն՝ հետ Մղտեսուն (*)։

Եւ ի միւս Կիրակիս (21 Նոյ.) զվէհրէտն հանեցին ի զնտանէն, որ ոչ գիտաց զչափ անձին իւրոյ վասն արբեցութեան, և ի բաղում տեղւոջ ինաս արարեալ գրամի, ոչ պահելով զհսապն և զբանն։ Այս յետին անգամ տարեալ եդին ի զնտան և Կ օր անդ կացեալ, և ոչ ոք գտաւ նմա օգնական. կրկին Մղտեսին մեք տվեալ փոխ ձ ղուռուշ, և կինն նորա երաշխաւոր եղեալ գրաւով՝ թէ վճարիցէ, և հանեցին օրս ի զնտանէն։

Բշիս (22 Նոյ.). ի երկրորդում պսակն գնացաք ի Ղալաթիայ՝ Սէմէրճու որդոյ Կիրակոսին, որ էր Մղտեսին կնքահայր նորա, և Գշիս (23 Նոյ.) եկաք ի տունս մեր։

(*) Օրագրութեանս հեղինակը Մահտեսի Ամբակումը երբեմն կ'անուանէ **Մահտեսի** կամ **Մղտեսի**, իր հայր Տէր Մարտիրոսը՝ **Տէրտէրն** կամ **Տէրտէրն իմ** կամ **Հարազատն իմ**, եղիազար վարդապետը՝ **Վարդապետն** կամ **մեր Վարդապետն** եւ Յովհաննէս Մուղնեցին՝ **Առաջնորդն**։